Ըսեց.—Զըմ լողկնայ։

Ըսեց.—Ցորի չըս լողկնայ։

Ըսեց.—Զըմ լողկնայ, մկայ Դաւիթ քու հօր քաղաք կ'էնի Դաւթի աւիրած։

Ըսեց.—Ախչախըզ, վազի, գնա Դաւթի կուշտ, չուր ես իմ շորեր հագնիմ ու գամ։

Խանդուլթ խանում հագաւ շորեր ու գնաց. էրեսի արուն մարուն լուացին ու առան հետ ուրանց գացին. տարան ուրանց օթաախ, հաց կերան, սիրտն առան։

Խաբար յո՞ւստից տանք,—խաբար Լօռուայ Համզէց տանք։ Լօռուայ Համզէն գիր գրեց ու ճամբեց Խանդուլթ խաթունի հօր ու ըսեց թէ՝—Խանդուլթ խանում կ'հագուս, կ'խբուս ու կ'ճամբես՝ գայ ընձի համար։

Թագաւոր լէ կանչեց ուր վաքիլ, վազիր ու ըսեց.—Ի՞նչ կ'ըսէք իդա գրին, օր էկեր ա։

Ըսեցին.—Թագաւոր, դու գինաս, իմալ գինաս, հմալ էրէ։

Թագաւոր ըսեց.—Բերէք ախչիկ հագունք, խբունք, ճամբինք՝ էրթայ։

Թագաւորի պզտիկ տղէն ըսեց.—Թագաւոր, ըսեց, եր որ քու ախչիկ ճամբիս էրթայ Համզայ փահլեւնին, հրա Մհերի տղայ Դաւթի ջուղաբ ի՞մալ կ'իտաս։

Թագաւորն ըսեց.—Ի՞մալ Մհերի տղայ Դաւթի։

Գացին ու խանչին բերին։

Էկաւ Թամանդայ էղաւ ու Թագաւորի առէջ կայնաւ։

Թագաւոր ուր վաքիլ, վազիր շիւարան թէ՝ իդամլայ լէ մարդ կ'էղնի։

Ու բերեցին էդ գիր կարտրցին Դաւթի առէջ։

Ըսեց.—Դաւիթ, լսեցի՞ր իդա գիր։

Ըսեց.—Լսեցի։

Ըսեց.—կեարնա՞ս՝ էրթաս Համզայ փահլեւնի հետ կռիւ էնիս։

Ըսեց.—Կ'երթամ։